Մ-62

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԵՇՔԱՆԲԱՐՅԱՆՍ ԺԻԼԲԵՐԹ ՎԱՀԱՆԻ

ՍԵՖՅԱՆ ԻՐԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ XVIII Դ. ԱՌԱՋԻՆ ՔԱՌՈՐԴԻՆ

Է.00.02 «Համաշխարհային պատմություն, միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Հաստատվում է
Դ. Սաֆրաստյան
Գիտ. քարտուղար
04.05.2017

ԵՐԵՎԱՆ - 2017

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝ պ.գ.դ., պրոֆ. Պ. Ա. Չոբանյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝
պ.գ.դ., պրոֆ. Վ.Ա. Բայբուրդյան
պ.գ.թ. Ք. Պ. Կոստիկյան

Առաջատար կազմակերպություն՝ Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ

Պաշտպանությունը կայանալու է 2017 թ. հունիսի 13, ժ. 13^{00}, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈՀ-ի 006 «Համաշխարհային պատմություն, միջազգային հարաբերություններ» մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ 0019, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24/4)

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2017 թ. մայիսի 4-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար՝ պ.գ.թ. Գ. Ա. Մարգարյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը:

Սեֆյան Իրանի վարչաքաղաքական համակարգի ձևավորման և նրա կառուցվածքի պատմության ուսումնասիրությունը գիտական կարևոր նշանակություն ունի և արդիական է ինչպես իրանագիտության, այնպես էլ հայագիտության տեսանկյունից: Արևելյան Հայաստանը XVIII դ. սկզբին գտնվում էր սեֆյան Իրանի պետության կազմի մեջ, ուստի սեֆյան պետության վարչական և սոցիալ-տնտեսական կառուցվածքի հետազոտությունը ոչ միայն ընդհանուր արևելագիտական հետաքրքրություն է ներկայացնում, այլև կարևոր է Արևելյան Հայաստանում դրանց դրսևորման յուրահատկություններն ու հանգամանքները և ըստ այդմ՝ նաև Հայաստանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների պատմությունը խորապես ուսումնասիրելու առումով, որտեղ համակցվում էին տեղական ավանդական աշխարհիկ ու հոգևոր և արևելյան իրանական հողատիրության ու վարչական կառավարման համակարգերը:

Իրանական պատմագիտության մեջ Սեֆյան Իրանի վարչական և սոցիալ-տնտեսական խնդիրների ուսումնասիրությունը ներկայումս կարևորվում է Իրանի վարչական կառույցների ձևավորման և կայացման հոլովույթի դիտանկյունից:

Ատենախոսության խնդիրներն ու նպատակները:

- Ուսումնասիրել սեֆյան Իրանի պետակառավարման համակարգի զարգացման գործընթացը՝ վարչական նոր համակարգի ձևավորման նպատակով XVIII դ. առաջին քառորդին ստեղծված սկզբնաղբյուրների հիման վրա:
- Հետազոտել սեֆյան Իրանի վարչական և սոցիալ-տնտեսական հարաբերությունների առանցքային հիմնահարցերը, երբ աֆղանների կողմից Սպահանի գրավումից հետո Իրանի պետական նախկին համակարգն արդեն ճգնաժամի մեջ էր և երկրի նոր կառավարում ձևավորելու նպատակով անհրաժեշտություն էր առաջացել համակարգված ուսումնասիրելու սեֆյան ավանդույթի հիմնական սկզբունքները:
-Համեմատական վերլուծությամբ բացահայտել ու ներկայացնել սեֆյան Իրանի պետակառավարման համակարգի յուրահատկությունների վերաբերյալ առկա սկզբնաղբյուրների հաղորդումները, վեր հանելով մասնավորապես քննարկվող ժամանակաշրջանում ստեղծված Դասթուր-ալ-մուլուք և Թազքիրաթ-

ալ-մուլուք աշխատությունների առանձնահատկություններն ու տարբերությունները:

- Հայ պատմագիրների և ժամանակաշրջանի հայկական սկզբնաղբյուրների տվյալների հիման վրա լուսաբանել և ներկայացնել սեֆյան Իրանի վարչական կառույցի արտացոլումը Արևելյան Հայաստանի իրականության մեջ:

- Պահպանված վավերագրերի համակողմանի ուսումնասիրությամբ նորովի հետազոտության ենթարկել սեֆյան Իրանի սոցիալ տնտեսական համակարգը՝ կարևորելով կրոնական ու արդարադատության, հողատիրության, հարկահանման, առևտրի և պաշտոնյաների վարձատրությունների ոլորտները:

Ատենախոսության գիտական նորույթը:

-Ատենախոսությունը սեֆյան Իրանի վարչատարածքային և սոցիալ-տնտեսական հարաբերությունների պատմության ուսումնասիրությանը նվիրված պարսկական ու հայկական սկզբնաղբյուրների մեջ պահպանված տվյալների քննության համատեքստում հայերենով իրականացված առաջին հետազոտությունն է:

-Ատենախոսությունը համալիր ուսումնասիրություն է, ուր սեֆյան համակարգի ձևավորումը գիտական վերլուծության է ենթարկվում զինվորականություն-քաղաքացիական իշխանություններ փոխհարաբերությունների, հոգևոր ու պետական իշխանությունների իրավասությունների պատմության համատեքստում:

-Ատենախոսության հետազոտության ժամանակագրական շրջանակները հնարավորություն են տալիս ներկայացնել և լուսաբանել Այսրկովկասում և մասնավորապես Հայաստանում տեղի ունեցած իրադարձությունների նախադրյալները, Իրանի տիրապետության ներքո գտնվող Երևանի և Ղարաբաղ-Գանձակի բեկլարբեկիությունների վարչական պատմության փաստերի ուսումնասիրությունը: Ատենախոսության մեջ բազմաթիվ նյութերի հիման վրա վերլուծության են ենթարկվել ժամանակաշրջանի պատմության հիմնահարցերը, որոնք քննարկվել ու վերագնահատվել են նոր մոտեցումներով և փաստարկներով:

-Ատենախոսության շարադրման ընթացքում թարգմանվել և օգտագործվել են գիտական շրջանառության մեջ չդրված պարսկալեզու վավերագրեր, որոնք պահպանվում են Իրանի ազգային գրադարանի Ազգային վավերագրերի կենտրոնում (Թեհրան), ինչպես նաև Նոր Ջուղայի Սուրբ Ամենափրկչյան վանքի Մատենադարանում:

Թեմայի ուսումնասիրության սկզբնաղբյուրների և գրականության տեսություն:

Հայաստանը գտնվելով իրանական պետության պետակա-ռավարական և սոցիալ-տնտեսական հարաբերությունների համակարգում, չի ուսումնասիրվել սեֆյան պետության կառույցի դիտանկյունից:

Ատենախոսությունը գրվել է հայերեն, պարսկերեն և անգլերեն տարաբնույթ աղբյուրների և գրականության հիման վրա: Ուսումնասիրմանը նպաստել են հրատարակված արխիվային փաստաթղթերի ժողովածուները, պատմողական սկզբնաղբյուրները, իրանագիտական տարբեր պարբերականներում հրատարակված հետազոտություններ: Ատենախոսության համար սկզբնաղբյուր են ծառայել Իրանի ազգային գրադարանի վավերագրերի կենտրոնի[1] և Նոր Ջուղայի Սուրբ Ամենափրկչյան վանքի թանգարանի[2] անտիպ վավերագրերը: Ուսումնասիրվող խնդիրների ամբողջական հետազոտության համեմատական քննության համար օգտագործվել են նաև հայկական, իրանական և եվրոպական պատմողական աղբյուրները, որոնք են՝ Աբրահամ Երևանցու[3], Աբրահամ Կրետացու[4], Առաքել Դավրիժեցու[5], Եսայի Հասան Ջալալյանի[6], Միքայել Չամչյանցի[7], Սիմեոն Երևանցու[8], Եղիա Կարնեցի Մուշեղյանի[9], Միրզա Սամիայի[10], Մուհամմադ Ռաֆի Անսարիի[11], Իսկանդար Բեկ Թորքաման Մոնշիի[12], Միրզա Ալինաղի Նասիրիի[13], Մոխթասար

---

[1] Իրանի Ազգային գրադարանի ազգային վավերագրերի արխիվ. Վավերագրեր No: 997-50, 997- 57, 997-61, 997-63, 997-85, 997-87, 997-96:

[2] Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ Վանքի դիվան. No:6.41.2.1 և 2, 6.41.10.1 և 2, 6.41.22.1 և 2, 6.41.65.1 և 2, 6.41.69.1 և 2, 6.41.74.1 և 2, 6.41.85.1 և 2, 6.41.88.1 և 2:

[3] Աբրահամ Երևանցի, Պատմություն պատերազմացն 1721-1736թ., Արմֆանի հրատարակություն, Երևան, 1938:

[4] Աբրահամ Կրետացի, Պատմություն, ՀԳԱ հրատարակչություն, Երևան, 1973:

[5] Առաքել Դավրիժեցի, «Գիրք պատմությանց», աշխատասիրությամբ Լ. Ա. Խանլարյանի, Երևան, ՀԳԱ հրատարակչություն,1990:

[6] Եսայի Հասան Ջալալյան, Պատմութիւն համառօտ Աղուանից երկրի, Ի տպարանի Առաքելական Աթոռոյ Ս. Յակովբեանց Յերուսաղեմ 1868-ՌՅԺԷ:

[7] Չամչյանց Միքայել, Հայոց Պատմություն, (սկզբից մինչև 1784 թվականը), Գ հատոր, Երևանի Համալսարանի հրատարակություն, Երևան, 1984:

[8] Սիմեոն Երևանցի, Ջամբռ, Երևան 2003:

[9] Եղիա Կարնեցու «Դիվանը» (Նյութեր Մերձավոր արևելքի և Անդրկովկասի պատմության), Երևան, «Միտք» հրատ. ,1968:

[10] میرزا سمیعا، تذکره الملوک، تهران، انتشارات امیرکبیر، 1368

[11] میرزا رفیعا، دستور الملوک، تهران، وزارت امور خارجه، مرکز چاپ و انتشارات، 1385

[12] اسکندر بیگ ترکمان، تاریخ عالم آرای عباسی، جلد اول و دوم، چاپ پنجم، تهران، انتشارات امیر کبیر، 1392

Մոֆիդի [14] երկերը և եվրոպացի ճանապարհորդների ուղեգրությունները[15]: Կարևոր սկզբնաղբյուրների թվում նշելի են Հ. Փափազյանի[16], Ք. Կոստիկյանի[17], Ա. Նավայիի[18] խմբագրությամբ հրատարակված պարսկերեն վավերագրերի ժողովածուները:

---

[13] میرزا علی نقی نصیری، القاب و مواجب دوره سلاطین صفوی، تصحیح دکتر یوسف رحیم لو، انتشارات دانشگاه فردوسی، مشهد، 1371

[14] ایرج افشار با همکاری محمد رضا ابوئی مهریزی، مختصر مفید(جغرافیای ایران زمین در عصر صفوی)، تهران، مجموعه انتشارات ادبی و تاریخی، موقوفات دکتر محمود افشار یزدی،1390

[15] Jean Baptiste Tavernier, "Les six Voyages de Jean Baptiste Tavernier, ecuyer baron D' Aubonne, qu'il a fait en Turquie, en Perse, et aux Indes", A Paris, 1676. سفرنامه تاورنیه، ترجمه: حمید ارباب شیرانی، تهران، 1382 Pietro Della Valle, "Viaggi" di Pietro Della Valle, Il Pellegrino descritti da lui medesimo inlettere familiari all-erudito suo amico Mario Schipano divisi in tre parti cioè: la Turchia, la Persia e l'India, 2 vols, Brighton, 1843. سفرنامه پیترو دلاواله، مترجم: شعاع الدین شفا، تهران، 1381 Jean Chardin, "Journal du voiage du chevalier Chardin en Perse et aux Indes orientales la Mer Noire et par la colchide: Qui catient le voyage de Paris á Ispahan", London, 1686. شاردن، سفرنامه شاردن، ترجمه اقبال یغمایی، تهران، 1372، ترجمه: حسین هژیریان/ حسن اسدی، تهران، 1388فریر رالند دبلیو ، برگزیده شرح سفرنامه سانسون، وضع ایران در زمان شاه سلیمان صفوی، به اهتمام تقی تفضلی، تهران، 1985، Francois Sanson, "Voyage ou relation de l'estat présent du royaume de Perse", Paris, 1694:

سفرنامه شرلی: سر آنتوان و رابرت شرلی. ترجمه آوانس، به اهتمام علی قلی سردار اسعد. طهران 1330، The Three Brothers; Or, the Travels and Adventures of Sir Anthony, Sir Robert, and Sir Thomas Sherley, in Persia, Russia, Turkey, Spain, Etc. with Portraits, This Elibron Classics title is a reprint of the original edition published by Hurst, Robinson, & Co. in London, 1825:

سفرنامه کروسینسکی(یادداشتهای کشیش لهستانی عصر صفوی)، ترجمه: عبدالرزاق دنبلی مفتون، انتشارات توس، تهران، 1363، انگلبرت کمپفر، سفرنامه، ترجمه کیکاووس جهانداری، چاپ سوم، تهران، انتشارات خوارزمی، 1363، ریشارد فرانسیس، رافائل دومان(میسیونری به ایران در سده هفدهم)، پاریس، 1374

[16] «Մատենադարանի պարսկերեն վավերագրերը», II. Կալվածագրեր. Պրակ առաջին (ԺԴ-ԺԶ դդ.), Կազմեց՝ Հ. Դ. Փափազյան, Երևան, 1968: «Մատենադարանի պարսկերեն վավերագրերը». Հրովարտակներ, պրակ I-ին (ԺԵ-ԺԶ դդ.), Կազմեց՝ Հ. Դ. Փափազյան, Երևան, 1956: А. Д. Папазян, Земельные отношения в Восточной Армении в XVI-XVII веках, Издательство АН Арм. ССР, Ереван, 1972:
Փափազյան Հ. Դ., Հողային հարաբերությունները Արևելյան Հայաստանում XVI-XVII դարերում, Հ. Գ. Ակադեմիայի հրատարակչություն, Երևան, 1972, Փափազյան Հ.Դ., Սեֆյան Իրանի ասիմիլյատորական քաղաքականության հարցի շուրջը, Բանբեր Մատենադարանի, ՀՀ ԳԱԱ, Ոq3, Երևան, 1956:

[17] Կոստիկյան Ք. Պ., «Մատենադարանի պարսկերեն վավերագրերը՝ հրովարտակներ», պրակ III-րդ (1652-1731), Երևան, Հ. Գ. Ակադեմիայի հրատարակչություն 2005:

[18] عبدالحسین نوایی ،اسناد و مکاتبات ایران از سال 1038 تا 1105 ه. ق همراه با یادداشتهای تفصیلی،انتشارات بنیاد فرهنگ ایران، 1360،تهران،نوایی عبدالحسین، شاه طهماسب صفوی مجموعه اسناد و مکاتبات تاریخی همراه با یادداشتهای تفصیلی،انتشارات بنیاد فرهنگ ایران،1350،تهران،نوایی عبدالحسین،شاه عباس،اسناد و مکاتبات تاریخی همراه با یادداشتهای تفصیلی،جلد سوم،انتشارات زرین،1366

Հետազոտության շրջանակներում օգտագործվել են թեմային կամ նրանում քննվող առանձին հարցերին իրենց ուսումնասիրություններում անդրադարձած իրանցի հետազոտողների աշխատությունները[19]: Ատենախոսության մեջ օգտագործվել են Վ. Մինորսկու[20], Ի. Մարչինկովսկու[21] Ի. Պետրուշևսկու[22], Վ. Բարտոլդի[23], Վ. Ֆլորի[24], Ջ. Ֆորանի[25], Ա. Լամբթոնի[26], Ջ. Մալքոլմի[27], Դ. Բլոյի[28], Ա. Մորթոնի[29], Ռ. Սավորիի[30], Ա. Նիումանի[31], Մ. Ռուդի[32],

---

[19] باستانی پاریزی محمد ابراهیم، سیاست و اقتصاد عصر صفوی، تهران، ,نصراله فلسفی، زندگانی شاه عباس اول، تهران، 1369 انتشارات سعید نو، 1362، نویدی داریوش، تغییرات اجتماعی- اقتصادی در ایران عصر صفوی(قرن شانزدهم و هفدهم میلادی)،ترجمه هاشم آقاجری، انتشارات نشر نی تهران، 1368، جعفریان، رسول، صفویه از ظهور تا زوال، تهران: موسسه فرهنگی دانش و اندیشه معاصر، چاپ اول: ۱۳۷۸، دکتر صفا کیش حمید رضا، صفویان در گذرگاه تاریخ، تهران، 1390، خلیلی نسیم، تاریخ صفویه، تهران، انتشارات ققنوس، 1387، نوایی عبدالحسین، تاریخ تحولات سیاسی-اجتماعی-اقتصادی و فرهنگی ایران در عهد صفویه، تهران، انتشارات سمت، 1381، احمدی مریم، تاریخ سیاسی و اجتماعی ایران در عصر صفوی، تهران، انتشارات امیر کبیر ،1371، غفاری فرد عباسقلی، تاریخ تحولات سیاسی، اجتماعی، اقتصادی و فرهنگی ایران در دوران صفویه،انتشارات سمت،تهران 1386، هوشنگ طالع، جهان نمای تاریخ ایران،تهران،انتشارات سمرقند، 1390، اشرف احمد، ویژگی های تاریخی شهر نشینی در ایاران دوره اسلامی، نامه اجتماعی، تهران 1353، بیات عزیزالله، کلیات جغرافیای طبیعی و تاریخ ایران،موسسه انتشارات امیر کبیر،تهران 1373،قائم مقامی جهانگیر،مقدمه یی برشناخت اسناد تاریخی، تهران،1350،

[20] مینورسکی ولادیمیر، سازمان اداری حکومت صفوی یا تحقیقات و حواشی و تعلیقات استاد مینورسکی بر تذکره الملوک، ترجمه مسعود رجب نیا، تهران، انتشارات امیر کبیر، 1378 , Minorsky, V.,ed. And trs, Tadkhirat al-Muluk, A Manual of Safavid Administration (circa 1137/1725) London, 1943:

[21] میرزا رفیعا، دستور الملوک، به کوشش و تصحیحی محمد اسماعیل مارچینکوفسکی، ترجمه علی کردآبادی، به سفارش مرکز اسناد و تاریخ دیپلماسی، تهران، وزارت امور خارجه، مرکز چاپ و انتشارات، 1385,

[22] ایلیا پاولویچ پطروشفسکی " کشاورزی و مناسبات ارضی در ایران عهد مغول(قرنهای 13 و 14 میلادی) جلد اول و دوم، انتشارات موسسه مطالعات و تحقیقات اجتماعی، تهران، 1344,

[23] بارتلد ویلهلم، جغرافیای تاریخی ایران، ترجمه: همایون صنعتی زاده، تهران، مجموعه انتشارات ادبی و تاریخی موقوفات دکتر افشار یزدی، 1377،بارتولد و.، تذکره جغرافیای تاریخی ایران،ترجمه حمزه سردادور(طالب زاده)، چاپ سوم، انتشارات توس، تهران، 1372An Historical Geography of Iran, Princeton, 1984 (edited by C.E. Bosworth):

[24] Floor Willem, Safavid Government Institutions, Mazda publisher, Costamesta, California, 2001,Floor Willem, The Khalifeh al-Kholafa of the Safavid Sufi Order, ZDMG 153/1, pp. 51-86, 2003, Floor Willem, The Sadr or Head of the Safavid Religious Administration, Judiciary and Endowments and Other Members of the Religious Institution, ZDMG 150, pp. 461-500, 2000.

[25] Foran J.,The Long Fall of the Safavid Dynasty: Moving beyond the Standard Views, IJMES 24, فوران جان، مقاومت شکننده تاریخ تحولات اجتماعی ایران (از صفویه تا سالهای پس از انقلاب اسلامی)، ترجمه: احمد تدین، تهران، انتشارات موسسه خدمات فرهنگی ققنوس،1377

[26] Lambton A.K.S.,Theory and Practice in Medieval Persian Government, Variorum Reprints,London,1980, Lambton Ann k.S,Landlord and Peasant in Iran, London 1953.

[27] Malcolm Sir John,The History of Persia, 2 vols.,London 1815, vol. II.

[28] David Blow, Shah Abbas (The Ruthless king who became an Iranian Legend), 2009, I.B. TAURIS, London-New York.

[29] Morton A. H.,The Early Years of Shah Ismail in the Afzal al-tavarikh and Elsewhere, in C. Melville, ed., Safavid Persia

[30] Savory R.,Collected articles published as Studies on the History of Safavid Iran, London, 1987, Savory R., Iran under the Safavids, Cambridge, U.K., 1980., Savory R.,

Վ. Հենիթսի [33] , Լ. Լաքհարթի ու Փիթեր Ջաքսոնի [34] և այլոց աշխատությունները: Ատենախոսության մեջ օգտագործվել են հայ գիտնականների՝ Վ. Բայբուրդյանի [35] , Լ. Դանեղյանի [36] , Մ. Կարապետյանի [37] , Թ. Հակոբյանի [38] , Լ. Մինասյանի [39] , Ա.

Studies on aspects of the Safavid bureaucracy include, "The Principal Offices of the Safawid State during the Reign of Ismāīl I (907-30/1501-24)," BSOAS 23, 1960, pp. 91-105; Idem, "The Principal Offices of the Safawid State during the Reign of Shah Ṭahmāsb (930-84/1524-76)," BSOAS 24, 1961, pp. 71-79;1960-1961, Savory R., Some Notes on the Provincial Administration of the Early Safawid Empire, BSOAS 27, pp. 114-28;1964, Savory R.,The Office of Khalifat al-Khulafa under the Safavids, JAOS 85, 1965, pp. 497-502; and other studies by the same author, collected in his Studies on the History of Safawid Iran, London, 1987, Savory Roger, The Safavid State and Polity",Iranian Studies Vol. 7, No. 1/2,Studies on Isfahan: Proceedings of the Isfahan Colloquium, Part I, Winter-Spring 1974, pp179-212., Savory, R.,Safavid Persia Cambridge History of Islam, Cambridge, Vol. 1, 1970, Savory, R.,The Safavid Administration System, pp 351-72. سیوری راجر، ایران عصر صفوی، ترجمه کامبیز عزیزی، تهران، نشر مرکز، 1385، سیوری راجر، تحقیقاتی در تاریخ ایران عصر صفوی (مجموعه مقالات)، ترجمه: عباسقلی غفاری فرد/ محمد باقر آرام، تهران، 1382، سیوری راجر، در باب صفویان، ترجمه: رمضان علی روح الهی، تهران، نشر مرکز،1380

[31] Andrew J. Newman, Safavid Iran (Rebirth of a Persian Empire), 2009, I.B. TAURIS, London-New York. 2006, Newman A, ed., Society and Culture in the Early Modern Middle East: Studies on Iran in the Safavid Period, Leiden, 2003, Newman A.,Clerical perceptions of Sufi practices in Late Seventeenth-Century Persia: Arguments over the Permissibility of Singing (ghinā), in L. Lewisohn and D. Morgan, eds., The Heritage of Sufism. Late Classical Persianate Sufism (1501-1750), pp. 135-64; Oxford, 1999:

[32] Matthee Rudi, Mint Consolidation and the Worsening of the Late Safavid Coinage: The Mint of Huwayza", Journal of Economic and Social History of the Orient, Vol. 44, No. 4 (2001), Matthee Rudi, The Safavids under Western eyes: Seventeenth-Century European Travelers to Iran", Journal of Early Modern History, Vol. 13 (2009),2009.

[33] هنیتس والتر، تشکیل دولت ملی(حکومت آق قوینلو و ظهور دولت صفوی)، مترجم: کیکاووس جهانداری، تهران، 1378

[34] Lockhart L., P., Jackson and The Cambridge History of Iran, Vol. 6,The Timurid & Safavid periods ed.Cambridge, 1986, Lockhart Laurence, The Fall of the Ṣafavi Dynasty and the Afghan Occupation of Persia, Cambridge, England, 1958. پیتر جکسون/ لورنس لاکهارت، تاریخ ایران کمبریج (جلد ششم، قسمت دوم) دوره صفوی،ترجمه: تیمور قادری، تهران، انتشارات مهتاب، 1387،پیتر جکسون/ لورنس لاکهارت، تاریخ ایران کمبریج (جلد ششم، قسمت سوم) دوره صفوی، ترجمه: تیمور قادری، تهران، انتشارات مهتاب،1387،

[35] Բայբուրդյան Վ., Իրանի պատմություն (հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը), Հ. Գ. Ակադեմիայի հրատարակչություն,Երևան, 2005: Բայբուրդյան Վ., Նոր Ջուղա, Հ. Գ. Ակադեմիայի հրատարակչություն ,Երևան, 2007:

1375 بایبوردیان واهان، نقش ارامنه ایرانی در تجارت بین المللی تا پایان سده 17 میلادی، ترجمه ادیک باغداساریان(گرمانیک)

[36] Դանեղյան Լ. Գ., Առաքել Դավրիժեցու երկը որպես Սեֆյան Իրանի XVII դարի պատմության սկզբնաղբյուր, Երևան, 1978:

[37] Կարապետյան Մ.Մ., «Իմամ Ջաֆարի» օրենքը և արևելահայերը (VVII-XVIII դարեր), Պատմաբանասիրական հանդես, No. 1, 1988, էջ 219-221:

[38] Հակոբյան Թ., Երևանի պատմությունը (1500-1800 թթ.), Եր., 1971:

[39] Մինասյան Լ.Գ., Դիվան Ս. Ամենափրկիչ վանքի 1606-1960, Արխիվի ուղեցույց գրքույկ, Հրատարակություն Իրանա-Հնդկաստանի Հայոց Թեմական Խորհրդի, Նոր Ջուղա, Տպարան Ս. Ամենափրկիչ Վանքի, 1983:

Վիրաբյանի [40] , Յ. Տէր Յովնանեանի [41] , Ա. Այվազյանի [42] աշխատությունները:

Ատենախոսության փորձաքննությունն ու պաշտոնական հավանությունը: Ատենախոսության հիմնական դրույթներն ու եզրահանգումները լուսաբանվել են հեղինակի կողմից հրատարակած գիտական 6 հոդվածներում: Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է ներկայացվել ԵՊՀ «Հայաստանի Հարակից երկրների պատմության» ամբիոնի կողմից:

Ատենախոսության տեսական և կիրառական նշանակությունը: Ատենախոսության հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել առաջադրված հիմնախնդիրների հետագա ուսումնասիրությունների ժամանակ: Ուսումնասիրության հիմնական դրույթները կարող են օգտակար լինել Իրանի և Հայաստանի պատմության վերաբերյալ ուսումնասիրությունների համար: Ստացված արդյունքները կարող են օգտակար լինել գիտակրթական բնագավառում՝ «Համաշխարհային պատմության», «Քաղաքակրթությունների տեսություն և պատմություն» բուհական ընդհանուր և մասնագիտական դասընթացների մշակման գործում:

Ատենախոսության մեթոդաբանական հիմքը: Թեման շարադրելիս առաջնորդվել ենք պատմահամեմատական և պատմաքննական մեթոդների զուգորդման սկզբունքով: Տեղեկությունները առավել ամբողջական դարձնելու նպատակով հատուկ ուշադրություն է դարձվել ատենախոսության մեջ օգտագործված արխիվային վավերագրերի, հրատարակված սկզբնաղբյուրների, մամուլի նյութերի, հուշագրությունների ուսումնասիրությունների համադրման և վերլուծության վրա:

Ատենախոսության կառուցվածքն ու բովանդակությունը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից և հավելվածից:

Ներածության մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, ներկայացված են հետազոտության նպատակներն ու խնդիրները,

[40] Վիրաբյան Ա., XVII դ. Երևանի խաների գործունեությունը Ջաքարիա Սարկավագ Քանաքեռցու «Պատմագրության» մեջ, Պատմաբանասիրական հանդես, 2011, 1, էջ 143-156:

[41] Տէր Յովնանեան Յարություն Թ., Պատմություն Նոր Ջուղայի (Սպահան), աշխարհաբարի թարգմանեց Պողոս ԱԻ. Քինյ. Պետրոսեան, Նոր Ջուղա, Նաշրէ Սալամ Հրատարակչություն, 2008:

[42] Այվազյան Ա.Մ., Իրադարձությունները Ղափանում և Նախիջևանի խանությունում 1724 թվականին, Պատմաբանասիրական հանդես, 1991, 2, 1991, էջ 102-114:

սկզբնաղբյուրների և գրականության տեսությունը, գոյություն ունեցող աղբյուրներն և գրականությունը և նրանց դասակարգումները, հետազոտության արդյունքները, առաջադրված հիմնախնդիրների տեսական և կիրառական նշանակությունը, ինչպես նաև ներկայացված է ատենախոսության եզրահանգումների գիտական նորույթը:

Ատենախոսության առաջին գլուխը՝ «Սեֆյան Իրանի պետակառավարման համակարգը»՝ բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ որ վերնագրված է «Սեֆյան հարստության պետակառավարման զարգացման շրջափուլերը», պատմական ակնարկի միջոցով ներկայացվել են սեֆյան ժամանակաշրջանի կառավարման համակարգի ու վարչական կառույցի ձևավորման գաղափարախոսական սկզբունքներն ու հիմքերը: Հանգամանալից վերլուծվել են սեֆյան հարստության վարչական կառույցի զարգացման շրջափուլերը, որոնք դասակարգվել են ըստ երեք շրջանների. առաջին՝ Շահ Իսմայիլի գահակալությունից մինչև Շահ Աբբաս Ա-ի գահակալությունն ընկած տարիները, որոնք բնութագրվել են որպես վարչական համակարգի փոփոխությունների և կազմավորման փուլ: Նշված ժամանակահատվածում պետության պաշտոնյաների պարտականությունները հստակ որոշված չէին և հաճախ խաչաձևվում էին: Երկրորդ փուլ է հանդիսացել Շահ Աբբաս Ա-ի գահակալության շրջանը, երբ վերջինիս կողմից նոր հիմքերի վրա դրվելով փոփոխության ենթարկվեց երկրի վարչական կառույցը: Երրորդ փուլը աստիճանական թուլացման և վերջնական անկման ժամանակաշրջանն էր, որը սկսվել էր Շահ Սաֆիի գահակալությունից և ձգվել մինչև սեֆյան հարստության անկումը:

Երկրորդ ենթագլխում՝ որը վերնագրված է «Սեֆյան պետության կառուցվածքը XVIII դարի առաջին քառորդին», ներկայացված են երկրի ղեկավարման համար սեֆյան իշխանավորների կողմից ձևավորված նոր արժեքներն ու վարչական կառուցվածքը, հիմնավորված է, որ այն ամբողջությամբ հիմնված էր երկրի իշխանությունը շահի ձեռքում կենտրոնացնելու սկզբունքի վրա: Համակարգի անընդհատ բարեփոխումների շնորհիվ ավելի քան երկու դար սեֆյան իշխանավորներին հաջողվել էր պահպանել իշխանությունը Իրանում: Պետակառավարման բարեփոխումների արդյունքում XVIII դարի առաջին քառորդին ձևավորվեց վարչական ղեկավարման նոր և ուռճացված համակարգ:

Թազքիրաթ-ալ-մուլուք երկը, որը պատրաստվել է 1726 թվականին Աշրաֆ Աֆղանի հրամանով և գրի առնվել սեֆյան Իրանի վարչական կառույցի ծալքերին լավատեղյակ պաշտոնյա Միրզա Սամիայի կողմից, սեֆյան պետակառավարման համակարգի լուսաբանման ամենից կարևոր վավերագրերից է: Այն բաղկացած է հինգ գլուխներից և երեք հոդվածներ ընդգրկող վերջաբանից: Թազքիրաթ-ալ-մուլուքում, որը ծառայել է պետակառավարման նոր համակարգի ձևավորման նախնական աշխատանքային ուղեցույց, ներկայացվում են սեֆյան Իրանի վարչական կառուցվածքի և արքունական պաշտոնների վերաբերյալ հանգամանալի տեղեկություններ, բացատրվում են պետական պաշտոնյաների պարտականությունները, խոսվում է նրանց եկամուտների մասին, տեղեկություններ և վիճակագրական տվյալներ են հաղորդվում քաղաքներում տեղակայված զինվորական ուժերի և կառույցների եկամուտների, ծախսերի և նրանց վճարվող աշխատավարձերի վերաբերյալ:

Երրորդ՝ «Թազքիրաթ-ալ-մուլուք և Դասթուր-ալ-մուլուք աշխատությունների համեմատական քննություն» ենթագլխում վերլուծվում է վարչական համակարգի վերաբերյալ Դասթուր-ալ-մուլուք և Թազքիրաթ-ալ-մուլուք աշխատությունների համեմատական պատկերը:

Կրոնական Պաշտոններ

Համար	Պաշտոնների անվանումներ	Դասթուր-ալ-մուլուք	Թազքիրաթ-ալ-մուլուք
1	Մոլաբաշի	✓	✓
2	Սեդարաթե Խասե և Ամմե	✓	✓
3	Մոթվալիե արամգահե Էմամ Ռեզա դար Մաշհադ	✓	-
4	Մոթվալիե արամգահե Հազրաթե Մասումե դար Ղոմ	✓	-
5	Մոթվալիե արամգահե Շահե Աբդոլազիմ դար Թեհրան	✓	-
6	Մոթեվալիաթե մազարաթե սաֆավիյե դար Արդաբիլ	✓	-
7	Շեյխոլ իսլամե Դարոլսալթանե Էսֆահան	✓	✓
8	Ղազիե Դարոլսալթանե Էսֆահան	✓	✓
9	Ղազիե Ասաքերե Էսֆահան	✓	✓

Համեմատության արդյունքում պարզվում են հետևյալ տարբերությունները: Թազքիրաթում բացակայող և աղյուսակի 3,4,5 և 6-րդ տողերն ընդգրկող տվյալները կրոնական այն պաշտոններն են, որոնք ուղղակիորեն առնչվում են շիա դավանանքին: Նրանք հիմնականում վերաբերվում են Մաշհադ, Ղոմ, Թեհրան և Արդաբիլ

քաղաքներում գտնվող շիա դավանանքի սրբավայրերի աշխատանքները տնօրինող պաշտոնյաներին, որոնք Թազքիրաթ-ալ-մուլուքում նկարագրված պաշտոնների ցանկում չեն ներգրավվել: Մեր կարծիքով այդ պետք է բացատրել երկու հանգամանքով: Առաջինը՝ տվյալ ձեռնարկը պատրաստվել է Իրան ներխուժած սունի դավանանքին հետևող աֆղանների պատվերով, որոնց համար հանդուրժելի չէր շիա դավանանքը: Երկրորդ՝ այն հավանաբար պայմանավորված էր նաև նշված տարածքները աֆղանների տիրապետության շրջանակներից դուրս և Շահ Թահմասպի իրավասության ներքո լինելու հանգամանքով:

Երկրորդ գլուխը՝ «Սեֆյան Իրանի վարչա-քաղաքական բաժանումները» բաղկացած է երկու ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ «Սեֆյան Իրանի վարչակառավարական բաժանումները», Թազքիրաթ-ալ-մուլուք աշխատության և մասնագիտական հետազոտական գրականության հիման վրա իրականացված ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռնում ավելի հանգամանորեն դիտարկելու և լուսաբանելու սեֆյան պետության վարչական բաժանումները, բացատրելու սեֆյան հարստության ժամանակաշրջանում Իրանի վարչական կառույցի ստորաբաժանումների յուրահատուկ մեխանիզմը: Վարչական բաժանումները սկզբնաղբյուրների մեջ ներկայացված են երկրի սոցիալ-տնտեսական հարաբերությունների վերաբերյալ հաղորդումների համատեքստում: Համաձայն Թազքիրաթ-ալ-մուլուքի, երկիրը բաժանված է եղել չորս գլխավոր վիլայեթների (վալիություն) և տասներեք բեկլարբեկիությունների:

Առաջին ենթագլխում ուսումնասիրվել ու համեմատվել են նաև նշված ժամանակաշրջանի եվրոպական, հայկական և պարսկական սկզբնաղբյուրներում առկա հաղորդումները Իրանի նշված ժամանակաշրջանի վարչական համակարգի վերաբերյալ և վեր հանվել նշված աղբյուրներում վարչական բաժանումների վերաբերյալ եղած հաղորդումների նմանություններն ու տարբերությունները, ներկայացվել են սեֆյան Իրանի վարչական բաժանումների առանձնահատկությունները ըստ Թազքիրաթ-ալ-մուլուք աշխատության մեջ առկա տեղեկությունների:

Երկրորդ ենթագլխում՝ «Արևելյան Հայաստանը Սեֆյան Իրանի վարչական համակարգում», հիմնավորվում է, որ սեֆյան Իրանի կազմի մեջ գտնվող և Արևելյան Հայաստանի վարչակառավարական տարածքներ հանդիսացող Չուխուր-Սա'ադի և Ղարաբաղ-Գանձակի բեկլարբեկիությունները իրենց աշխարհագրական դիրքով և

ռազմաքաղաքական կարևորությամբ գտնվել են սեֆյան շահերի մշտական ուշադրության կենտրոնում: XVIII դ. 20-ական թվականներին աֆղանների կողմից Սպահանի գրավումից հետո թեև այդ տարածքները նվաճվել են օսմանյան արշավանքների հետևանքով ու գտնվել օսմանյան տիրապետության ներքո և աֆղանները չեն վերահսկել նշված տարածքներին, սակայն չնայած այդ հանգամանքին, Թազքիրաթ-ալ-մուլուքի մեջ նրանք ներառված են պարսից պետության ավանդական վարչական կազմի մեջ: Թազքիրաթ-ալ-մուլուքի երկրորդ գլխի նախաբանի մեջ երկրի տասներեք բեկլարբեկիությունների անվանումների թվարկման մեջ, հինգերորդ և վեցերորդ բեկլարբեկիությունների թվարկումներով նշվում են Արևելյան Հայաստանի տարածքն ընդգրկող Չուխուր-Սա'ադի և Ղարաբաղ-Գանձակի բեկլարբեկիությունների անունները: Սկզբնաղբյուրներում Իրանի վարչական բաժանումների վերաբերյալ առկա հաղորդումների միջև տարբերությունների հանգամանքը շահարկության առիթ է դարձել ադրբեջանցիների կողմից, որոնք ձգտել են ստեղծել այնպիսի պատկեր, թե իբր Չուխուր-Սա'ադի բեկլարբեկիությունը մտնում էր Ադրբեյջանի բեկլարբեկիության կազմի մեջ: Համաձայն Թազքիրաթ-ալ-մուլուքի, Չուխուր-Սա'ադը և Գանձակ-Ղարաբաղը իրականում եղել են ինքնուրույն բեկլարբեկիություններ: Պարսկական սկզբնաղբյուրներում Չուխուր-Սա'ադի և Գանձակ-Ղարաբաղի բեկլարբեկիությունների վերաբերյալ պահպանված տվյալների հիման վրա հաստատվում է այն տեսակետը, որ հայաբնակ այդ երկու բեկլարբեկիությունները ընդհուպ մինչև սեֆյան հարստության անկման շրջանը առանձնահատուկ սահմանային կարգավիճակ են ունեցել սեֆյան պետության համակարգում:

Ատենախոսության Երրորդ գլուխը՝ «Սեֆյան Իրանի սոցիալ-տնտեսական հարաբերությունները», բաղկացած է հինգ ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ «Կրոնական ու արդարադատության համակարգ», ներկայացված է սեֆյան Իրանի կրոնական ու արդարադատության համակարգերի ուսումնասիրությունը: Սեֆյան կրոնական և արդարադատության համակարգերի գործունեության հիմնական գործառույթների ուսումնասիրության արդյունքում պարզվում է, որ այդ երկու կառույցները գործում էին փոխհամաձայնեցված: Կրոնական ղեկավարները, որպես կառույցի ղեկավար, անկախ կերպով չէին կարող աշխատել ու ամբողջությամբ ենթակա էին պետական վարչական կառույցներին: Շահն իր

պետական վարչական կառույցի մեջ ուներ դիվանբեգի կոչվող պաշտոնը, որը կրոնական հանգամանք չուներ, և դատավորներն ու կրոնական առաջնորդները նրա ենթակա պաշտոնյաներն էին: Ըստ Թազքիրաթ-ալ-մուլուքի տեղեկությունների, դիվանբեգիի պարտականությունների մեջ էր մտնում պետության ողջ տարածքից ստացված բողոքների քննությունը և նրանց լուծումը ըստ բողոքարկուների կարգավիճակի:

Երկրորդ ենթագլուխը՝ «Հողատիրություն», նվիրված է Սեֆյան ժամանակաշրջանի Իրանում սոցիալ-տնտեսական հարաբերությունների ոլորտում հողատիրության տարբեր եղանակների ուսումնասիրությանը: Սեֆյան Իրանի տարածքները ըստ սեփականության բաժանվում էին երեք գլխավոր խմբերի՝ խասսե շարիֆե, մամալիք և մողուֆաթ կամ հոգևոր կառույցներին պատկանող ու նրանց կողմից տնօրինվող տարածքներ (վակֆ): Սեֆյան շահերը լինելով նաև երկրի գլխավոր հողատերերը, իրենց կալվածքները (խասսե շարիֆե) ղեկավարելու գործը հանձնել էին վարչական գործակալներին: Ատենախոսության մեջ մանրամասնորեն ուսումնասիրվել են սեֆյան ժամանակաշրջանի խասսե-ի (արքունական) և հողատիրության այլ ձևերի միջև եղած փոխհարաբերությունների խնդիրները: Հողատիրության երկու հիմնական ձևերը՝ թիուլը և սոյուրղալը, իրականում խասսե հողերի օգտագործման միաժամանակ գործող երկու եղանակներ էին: Ավատային նվիրատվություններից գլխավոր տեղ էր գրավում թիուլը, որն, ի տարբերություն սոյուրղալի, ժառանգական չէր: Սոյուրղալի տերերը լինելով արտոնյալ կարգավիճակում, ազատվում էին հարկերից ու նաև ստանում էին վարչական անձեռնմխելիություն: Սոյուրղալի տերերին տրվում էր այդ տարածքներին ժառանգաբար տիրելու իրավունք: Սոյուրղալի փաստացի տնօրինումը իրականացվում էր հողօգտագործման գործընթացի կազմակերպման հետագա ընթացակարգերով, որոնք անմիջականորեն պայմանավորված էին իշխող հաքիմների և հողագործների միջև եղած տնտեսական հարաբերություններով: Հողատերերն էլ իրենց հերթին ենթակա էին շահին իրենց իրավունքների հողի նկատմամբ պահպանելու և վերահաստատելու տեսակետից: Ժամանակաշրջանի վավերագրերը բավարար տեղեկություններ են պահպանել հողատիրության և հողօգտագործման ու այդ գործընթացից բխող տնտեսական գործունեության վերաբերյալ, որոնք հաստատում և լրացնում են Թազքիրաթ-ալ-մուլուքում եղած հաղորդումները :

Երրորդ ենթագլուխը նվիրված է «Հարկահանման գործընթացի» ուսումնասիրությանը: Սեֆյան Իրանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների ոլորտում կարևոր տեղ էր զբաղեցնում հարկահանման գործընթացը: Հարկահավաքման վարչական կառույցը ավելի բարդ էր, ինչը ուղղակի պայմանավորված էր նաև բնակչության պարբերաբար իրականացվող մարդահամարների և հարկամատյանների կազմման գործընթացով: Հարկերը պիտի հավաքեին հաքիմները, որոնց գործունեության սահմանը նախապես որոշված էր կենտրոնական իշխանության գործակալների կողմից նրանց տրամադրված ուղեցույցով: Այդ գործակալներն էին վեզիրները, (որոնք աշխատում էին մուսթովֆի-ուլ-մամալիքի ուղղակի հսկողության ներքո) և վաղենեվիսը (որը տեղեկատվության պարտականություն ուներ սադրե ազամի հսկողության տակ և աշխատում էր որպես նրա ներկայացուցիչ: Յուրաքանչյուր վիլայեթի եկամուտներից նախապես որոշված չափով (դրամական և գույքային եղանակով) գանձվող հարկերը ուղարկվում էին պետական գանձարան: Վիլայեթների եկամուտների մի մասը տրամադրվում էր տեղական իշխողներին, իսկ որոշակի հատված տրամադրվում էր տվյալ վիլայեթում տեղակայված զորքին՝ աշխատավարձերի վճարման համար: Այն վիլայեթներում, որում շահը անձնական հողատարածքներ չուներ, ստանում էր ռոսում կոչվող տուրքը: Ռոսումը գույքային, նպարային և որոշ պարագաներում գումարի տեսքով գանձվող տուրքեր էին: Որպես ռոսում կարող էին լինել նաև թանկարժեք իրեր, որոնք որպես նվեր «փիշքաշ» կամ նովրուզի առիթներով նվիրվում էին արքունական գանձարանին:

Ատենախոսության մեջ ներկայացվել է սեֆյան պետության հպատակ ժողովուրդների և մասնավորապես հայ ժողովրդի նկատմամբ հարկահանման գործընթացների ուսումնասիրության կարևորությունը: Տվյալ ժամանակաշրջանում Արևելյան Հայաստանում գործվում էր հարկահանման նույն համակարգը, ինչ սեֆյան Իրանի ենթակա այլ շրջաններում: Հարկատեսակների թիվը գերազանցել էր երեք տասնյակը, իսկ համայնքի ներսում գյուղական ավագների, քեդխուդաների, մելիքների, ինչպես նաև եկեղեցու կողմից սահմանված հարկերով ու տուրքերով հանդերձ, հարկերի ընդհանուր թվաքանակը գերազանցում էր հիսունը:

Չորրորդ ենթագլուխը՝ «Առևտուրը», նվիրված է Արևմուտքի հետ առևտրական հարաբերությունների զարգացման ուսումնասիրությանը: Սեֆյան շահերը և նրանց գործակալները դեռևս Շահ Աբբաս Առաջինի ժամանակներից ուղղակի միջամուխ էին

առևտրի ասպարեզում: Գործնականում մետաքսի առևտրի մենաշնորհը գտնվում էր սեֆյան շահերի ձեռքին: Ատենախոսության մեջ ուսումնասիրվել են առևտրի ասպարեզում սեֆյան շահերի կատարած աջակցության և օժանդակության դրսևորումներն ու նորամուծությունները /նոր քարավանատների կառուցումներ, ճանապարհների անվտանգության ապահովմանն ուղղված միջոցառումներ, ռահդարների նշանակումներ և այլն/: Իրանի պետական գանձարանի հիմնական մուտքերի մեջ մետաքսի արտադրությունն ու առևտուրը կարևոր տեղ էին զբաղեցնում: Իրանական պետության մեջ մետաքսի արտադրության և ըստ այդմ վաճառքի հիմնական կենտրոններից էր Ղարաբաղը, որը Գիլանից հետո զբաղեցնում էր երկրորդ տեղը՝ գերազանցելով Խորասանին, Մազանդարանին և Շիրվանին:

Հինգերորդ ենթագլուխը, որ վերնագրված է «Աշխատավարձեր»՝ նվիրված է Ժամանակի սկզբնաղբյուրների հաղորդումների հիման վրա պետակառավարման համակարգի պաշտոնյաների աշխատավարձերի ուսումնասիրությանը: Ըստ Թազքիրաթ-ալ-մուլուքի հավելվածներում պահպանված տվյալների, գոյություն է ունեցել աշխատավարձի (մավաջեբի) երեք կարգ՝ բարձր (500 թումանից ավելի), միջին (100 մինչև 500 թուման) և ցածր (մինչև 100 թուման): Եղած տվյալների հիման վրա աշխատավարձերի միջին չափը բարձրագույն պաշտոնյաների համար կազմել է 768 թուման, միջին կարգի պաշտոնյաների համար՝ 255, իսկ ստորին կարգի պաշտոնյաների համար 53 թուման: Զինվորականների հինգ աստիճանների աշխատավարձը 4-ից 9 թումանի սահմաններում էր և միջին աշխատավարձը 5,8 թուման էր հաշվվում: Սա նշանակում է, որ հասարակ զինվորների աշխատավարձը այլ պաշտոնյաների 7,5 տոկոսն էր կազմում: Ըստ Թազքիրաթ-ալ-մուլուքի տվյալների հիման վրա իրականացված հաշվարկի, պետության վարչական և ռազմական ծախսերը հասնում էին մինչև 491986 թուման և 5700 դինարի, որից 396792 թումանը տրամադրվում էր հաքիմներին և ամիրներին, իսկ վարչական կառույցում աշխատող ամիրների համար, սահմանված աշխատավարձի ընդհանուր գումարը կազմել է մոտավորապես 6047 թուման: Մշտական վարձու բանակի զինծառայողների աշխատավարձերը կազմում էին պետության ընդհանուր ծախսերի տասը տոկոսը:

Եզրակացությունում ի մի են բերված հետազոտության հիմնական արդյունքներն ու եզրահանգումները.

-Երկրի ղեկավարման համար սեֆյան տիրակալների նպատակն էր ձևավորել վարչական ղեկավարման համար նոր և կազմակերպված համակարգ: XVIII դարի առաջին քառորդին այդ գործընթացը, սակայն, հանգեցրեց ուռճացված պետակառավարման համակարգի ստեղծման, ինչը նպաստեց երկրի սոցիալ-տնտեսական հարաբերություններում ճգնաժամի խորացմանը:

-Սեֆյան Իրանի պետակառավարման համակարգը 1726թ. ներկայացնող Թազքիրաթ-ալ-մուլուք և մինչ աֆղանական նվաճումը կազմված Դասթուր-ալ-մուլուք աշխատությունների միջև կատարված համեմատության արդյունքում պարզվում է, որ երկուսն էլ քաղվածաբար և լրացումներով պատրաստվել են միևնույն հիմքը ունեցող չպահպանված մայր աշխատությունից:

-Սեֆյան կրոնական և արդարադատության համակարգի գործունեության հիմնական սկզբունքները ուսումնասիրելու արդյունքում պարզվում է, որ այդ երկու կառույցները աշխատում էին սերտ համակարգված և կրոնական առաջնորդները, որպես կառույցի ղեկավար, անկախ կերպով չէին աշխատում ու ամբողջությամբ ենթակա էին պետական վարչական կառույցներին:

-Պարսից պատմագրության մեջ, մասնավորապես Իսքանդար Մոնշիի աշխատություններում, ինչպես նաև Դասթուր-ալ-մուլուքում և Թազքիրաթ-ալ-մուլուքում պահպանված ուշագրավ տվյալները հաստատում են, որ Հայաստանի տարածքն ընդգրկող պարսկական երկու բեկլարբեկիությունները կարևոր և ինքնուրույն տեղ են զբաղեցրել սեֆյան իշխանության համակարգում:

-Չուխուր Սաադի և Ղարաբաղի բեկլարբեկիությունների կողմից վճարվող հարկերի գումարի չափերը, իրանական մյուս բեկլարբեկիությունների վճարների համեմատ, գտնվում էին երկրորդ և երրորդ տեղերում, որոնց եկամուտի ընդհանուր գումարը ավելի բարձր էր, քան մնացյալ այլ բեկլարբեկիությունների եկամուտները:

Ատենախոսության հավելվածում ընդգրկված են օգտագործված վավերագրերի լուսանկարները, պարսկերեն ընթերցումները և հայերեն թարգմանությունները:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀԵՂԻՆԱԿԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ

1- Սեֆյան Պարսկաստանի վարչական բաժանումն ըստ Թազքիրաթ-ալ-մուլուքի, Արևելագիտության հարցեր, 2013, N. 8, էջ 333-340:
2- Սեֆյան Պարսկաստանի պետակառավարման համակարգը ըստ Թազքիրաթ-ալ-մուլուք և Դասթուր-ալ-մուլուք աշխատությունների, Մերձավոր Արևելք, 2014, N. 9-10, էջ 212-220:
3- Սեֆյան Պարսկաստանի պետակառավարման համակարգը ըստ Թազքիրաթ-ալ-մուլուքի, Պատմություն և մշակույթ, հայագիտական հանդես, 2014, N. 1, էջ 293-303:
4- Eastern Armenia within the administrative system of the sefevid Iran according to the persian sources, Բանբեր Հայագիտության, 2015, N.3, էջ 167-173:
5- Սեֆյան Իրանի տնտեսության հիմնահարցերը և դրանց արտացոլումը «Թազքիրաթ-ալ-մուլուք» գրքում, Կանթեղ, գիտական հոդվածներ, 2016, N. 1(66), էջ 95-106:
6- Վեզիրի եվ քալանթարի պաշտոնները սեֆյան Իրանի վարչական համակարգում, Պատմություն և մշակույթ, հայագիտական հանդես, 2016, N. 1, էջ 263-273:

ЖИЛБЕРТ ВАГАНОВНА МЕШКАНБАРИАНС
АДМИНИСТРАТИВНЫЕ ДЕЛЕНИЯ И СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКИЕ ОТНОШЕНИЯ СЕФЕВИДСКОГО ИРАНА В ПЕРВОЙ ЧЕТВЕРТИ XVIII ВЕКА

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.02 «Всемирная история, международные отношения».

Защита состоится 13 июня, 2017 г. в 13.00 часов на заседании специализированного Совета 006 «Всемирная история, международные отношения» ВАК РА действующего при Институте Востоковедения НАН РА. Адрес: 0019, Армения, Ереван, ул. Маршала Баграмяна 24/4.

РЕЗЮМЕ

Диссертация состоит из введения, трёх глав, выводов, списка использованной литературы и приложения.

Во введении обоснована актуальность темы, представлены цель и задачи исследования, обзор первоисточников и использованной литературы, научная новизна и основные положения, вынесенные на защиту. Представлено теоретическое и практическое значение диссертации, степень научной разработанности проблемы, объект и предмет исследования, а также методология исследования.

Первая глава диссертации – «Система государственного управления Сефевидского Ирана» состоит из трех подразделов, в которых представлены циклы развития административной структуры Сефевидского Ирана, разъяснены обязанности должностных лиц в государственном управлении, исследованы сообщения об их доходах и статистических данных, прокомментированы отчеты о военных структурах, расположенных в городах, о доходах и расходах их персонала и выплачиваемой им зарплате.

Вторая глава – «Административно-политическое деление Сефевидского Ирана», состоит из двух частей, в которых исследованы и сопоставлены данные европейских, армянских и персидских источников об административном делении Ирана, проанализированы данные источников Дастур-ал мулук и Тазкират-ал-мулук об административной системе, а также степени достоверности их сообщений, представлена система административного деления Сефевидского Ирана по данным Тазкират-ал-мулук. Изучены данные о беглербегстве Чухур-Саад (Ереван) и Карабах-Гандзак,

содержащиеся в персидских источниках, которые доказывают, что, будучи приграничной территорией, они, вплоть до падения Сефевидского Ирана, сохраняли свою особую военно-политическую значимость в государственном управлении Ирана.

Третья глава – «Социально-экономические отношения Сефевидского Ирана» состоит из пяти подразделов, в которых представлены системы религиозного права и социального устройства, торговых отношений, землевладения и его основных форм, процесса налогообложения Сефевидского периода. Исследованы особенности налогообложения подданных Сефевидского Ирана и в особенности армянского народа. Рассмотрены нововведения и изменения Сефевидского двора в первой четверти XVIII века в торговле шёлком, которая еще со времен шаха Аббаса Первого в торговых отношениях с Западом являлась монополией Сефевидских шахов и практически находилась под контролем армянских купцов. По сообщениям разных источников представлены правители вилайетов, число их подчинённых, а также их зарплаты или маваджебы, и в результате сравнительного анализа освящается ряд ключевых индикаторов социальных отношений.

В заключении приводятся основные результаты и выводы:

— Целью сефевидских правителей было создание новой системы управления, однако это привело к гипертрофии управленческого аппарата, что способствовало углублению кризиса социально-экономических отношений в первой четверти XVIII века.

— В результате изучения деятельности религиозной и юридических систем Сефевидского Ирана выяснено, что обе структуры действовали в тесной связи и, в частности духовные руководители были подчинены административным структурам государства.

— Размеры налогов, выплачиваемых двумя беглербегствами на территории Восточной Армении, в сравнении с выплатами других беглербегств Иранского государства, были на втором и третьем местах, а в сумме они превосходили доходы от всех остальных беглербегств вместе взятых. Поэтому Чухур-Саадское и Гандзак-Карабахское беглербегства занимали важное и самостоятельное место в административной системе Сефевидского Ирана. В Приложении представлены те новообнаруженные персидские документы и их переводы на армянский, которые использовались в ходе изложения основных положений диссертации.

JILBERT V. MESHKANBARIANS

THE ADMINISTRATIVE DIVISIONS AND SOCIO-ECONOMIC RELATIONS OF SAFAVID IRAN IN THE FIRST QUARTER OF THE 18th CENTURY

The dissertation is submitted to defend the Scientific Degree of the Doctor of Philosophy (PhD) in the field of "World history, International relations ", 07.00.02.

The defense will be held on 13th of June, 2017 at 13:00 pm at the meeting of the specialized Council 006 "World history, International relations" of the Higher Certification Commission of the Republic of Armenia at the Institute of Oriental Studies of the National Academy of Sciences of Armenia. Address: 0019, Armenia, Yerevan, Marshal Baghramyan 24/4.

SUMMARY

The thesis consists of an Introduction, three Chapters, Conclusions, Bibliography and an Appendix.

The introduction substantiates the relevance of the topic, presents the objectives of the study, a review of primary sources and used literature, scientific novelty and the main provisions made for defense. The theoretical and practical significance of the dissertation, the degree of scientific elaboration of the problem, the object and subject of research, and the methodology of the research are presented.

The first chapter of the thesis - "The Administration System of Safavid Iran" consists of three subsections in which the development cycles of the administrative structure of Safavid Iran are presented, the duties of officials in public administration are explained, reports on their incomes and statistics are explained, reports on military structures located in Cities, the incomes and expenditures of their staff and the salaries paid to them.

The second chapter, "The Administrative-Political Division of the Safavid Iran" consists of two parts in which the data of European, Armenian and Persian sources on the administrative division of Iran are examined and compared, the sources of Dustur-al-muluk and Tazkirat-al-muluk about the administrative system, as well as the degree of reliability of their reports, the system of administrative division of the Safavid Iran according to Tazkirat-al-muluk is presented. The data on the Armenian

beglarbegies of Chukhur-Saad (Yerevan) and Garabagh-Gandzak, contained in Persian sources, have been studied, which prove that, as a border area, they, until the fall of Safavid Iran, retained their special military and political significance in the Iranian state administration.

The third chapter - "Socio-economic relations of Safavid Iran" consists of five subsections, which represent the systems of religious law and social order, trade relations, land ownership and its basic forms, the taxation process of the Safavid period. The details of taxation of the subjects of the Safavid Iran and especially of the Armenian population are described. Considered are innovations and changes in the Safavid court in the first quarter of the 18th century in silk trade, which since the time of Shah Abbas the First in trade relations with the West was the monopoly of Safavid Court and was practically controlled by the Armenian merchants. According to various sources, the rulers of the vilayets, the numbers of their subordinates, as well as their salaries or mawajebs, are presented, and as a result of the comparative analysis a number of key indicators of social relations are highlighted.

In the Conclusion the main results and conclusions are given:

- The purpose of the Safavid rulers was to create a new management system, but this led to an overgrown administrative apparatus, which contributed to deepening the crisis of socio-economic relations in the first quarter of the 18th century.
- As a result of studying the activities of the religious and legal systems of Safavid Iran, it was found that both structures acted in close connection and, in particular, spiritual leaders were subordinated to the administrative structures of the state.
- The size of taxes paid by Chokhur-Saad and Gandzak-Karabakh penalties in comparison with the payments of other refugees was at the second and third places, but in sum they exceeded the incomes of all other beglarbegies taken together. Therefore, Chokhur-Saad and Gandzak-Karabakh beglarbegies had an important place in the administrative system of the Safavid Iran. The Appendix presents those newly discovered Persian documents and their translations into Armenian, which were used during the presentation of the main objectives of the thesis